

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

### Թ Ա Ի Ս Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Կուսակրօնների հասարակական ծառայութիւնը: Մի քանի ամիս առաջ ս. Սինոդը կոչ էր ուղղել բոլոր վանքերի սպասաւորներին, որ աջակցութիւն ցոյց տան բաց անելու սպասարաններ պատերազմից փաստուած զինուորների համար: Այդ կոչը յաջող հետևանքներ ունեցաւ: 43 թեմում հնարաւոր է եղել այդ մարդկանց վանքերում գտնել 2000 հոգու համար տեղ, որոնցից 1500-ը պահպանուել է տեղական միջոցներով: Բայց 43 թեմը կազմում է ամբողջի 2/3-ը, ուստի և պէտք է սպասել, որ այդ թիւը կանի 1 1/2 անգամ: Երեք հազար վիրաւոր զինուորներ այդպիսով սպաստան կը գտնեն վանքերում: Այժմ Ս. Սինոդը դիմում է վանքերին և կուսակրօններին նոր առաջարկութեամբ—բաց անել նոր սպասարաններ կարծր յարմարութիւններով: Ռուսաց հասարակութեան և ժողովրդի առաջ ծառայել է նոր և առաջնակարգ նշանակութիւն ունեցող հարց: Տասնեակ և հարիւր հազարաւոր մարդիկ, որոնք պատերազմում վիրաւորուելով աշխատանքի անընդունակ են դարձել, կարօտ են ամենալուրջ օգնութեան: Շատերը զրկուել են իրենց ձեռքից, իրենց ոտքերից, աչքերից և կամ վիրաւորուած են մարմնի այս կամ այն մասից և ամբողջ կեանքի ընթացքում պէտք է մնան անընդունակ աշխատանքի համար: Այսպիսի դժբախտները բնականաբար իրաւունք ունին օգնութիւն սպասելու պետութիւնից: Սակայն պետութիւնը չէ կարող բոլորի կեանքն էլ ապահովել բաւոյն կերպով: Ամենալուրջ պէտքում էլ այդ մարդկանց նշանակուած նպատակը չէ կարող ստեղծել նրանց համար տանելի կեանք և կամ վերացնել այն, ինչ որ ունեցել են նոքա պատերազմից առաջ: Հասկանալի է, որ ամենափոքր հնարաւորութեան դէպքում անգամ այդ մարդիկ կուզենային աշխատել և իրենց ստացած պետական նպաստի պահտը լրացնել:

Պատերազմը մեծ դժբախտութիւն է ոչ միայն առանձին անհատների համար, այլ և ամբողջ ժողովրդական օրգանիզմի համար: Պատերազմն այդ օրգանիզմից քամում է մեծ քանակութեամբ արիւն, իսկ ներկայ պատմութեան մէջ չտեսնուած պատերազմը

քամում է ազգերից այնքան արիւն, որ վերջը նոքա կարող են դառնալ սակաւարիւն։ Պատերազմի մէջ ընկնում են ազգերի ծագիկ հասակով երիտասարդ թարմ ոյժերը, բնականաբար և պատերազմից յետոյ ազգերը թուլանում են՝ կորցնելով իրենց աշխատանքի ընդունակ և գործող մասը։ Բայց բացի պատերազմի դաշտում ընկածներից՝ մնում են պատերազմից յետոյ նաև մեծ թուով ֆլաստուածներ և կամ աշխատանքի անընդունակներ։ Սրանց պահպանութեան գործը ծանրանում է բոլորիս վրայ, և մենք պէտք է կարողանանք այնպէս կազմակերպել՝ որ շատ ու քիչ աշխատանքի ընդունակ մարդկանց համար գործ գտնենք և միջոց տանք պետութիւնից ստացած իրենց ապրուստի պակասը լրացնել։ Սպաների համար արդէն խնդիր եղել է՝ որ նրանց համար աւելի յարմարագոյնն է մանկավարժական ասպարիզում պաշտօն տալ։ Մնացած զինուորներին էլ իւրաքանչիւրին յարմարագոյն պաշտօն տալ։ Այս տեսակ զինուորների համար ամենից յարմարագոյն պարապմունքը արհեստն է։ Դժբախտաբար արհեստները մեղանում ծաղկած վիճակի մէջ չեն, ահա և այս տեսակից հասարակութիւնը պէտք է օգնի պետութեան և կազմակերպի համապատասխան աշխատանքի տներ։

Ս. Սինօզը ծրագրել է հիմնել զինուորների համար վանքերին կից յարմարագոյն աշխատանքի տներ։ Այդ մեծ գործին ամենից առաջ պէտք է նպաստեն վանական վարչութիւններն իրենց վանականներով։ Նոքա կարող են նախ իրենց միջոցներից բաժին հանել այդ մեծ եղբայրական գործին և ապա դրսից ևս կը արուի նրանց նպաստներ։ Եւ այդ աստուածահաճոյ հաստատութիւններում կարելի է սովորեցնել նրանց զանազան տեսակի արհեստներ և արուեստներ, միաժամանակ զարկ տալով և նրանց ծաղկման։

Ահա և այս սուրբ գործին պէտք է աջակցեն թէ իրենց կոչման արժանի վանականներն և թէ ճշմարիտ քրիստոնեայ աշխարհականները։ Վանքերին կից արհեստանոցներ հիմնելով ոչ միայն օգտակար կըլինի ֆլաստուած զինուորների համար, այլ հէնց իրենց հազարաւոր վանականների համար ևս, որոնք կը սովորեն արհեստներ՝ պարտոյ ժամանակները կօգտագործեն յօգուտ վանքի։ Այժմ աւելի քան յարմար ժամանակն է իրագործել վանքերում այդ գեղեցիկ միտքը։ Թող վանքերում թագաւորի ճշմարիտ աշխատանքը, թող հազարաւոր վանականներն էլ իրենց աշխատանքի պտուղը դնեն հայրենիքի սեղանի վրայ այս ծանր օրերին։ Այդ տեսակի աշխատանքից երբէք կրօնաւորները չպէտք է խուսափեն, ընդհակառակ պատիւ կը բերի նրանց, երբ ճշմարիտ կերպով նոքա անձնատուր կը լինին այդ վեհ գործին։ Վանականների պատմութիւնից շատ օրինակ կարելի է բերել, որ ամենանշանաւոր հայ-

ընդն անգամ ազատ ժամանակ զբաղուել են կօշիկներ պատրաստելով, զբքեր կազմելով և առհասարակ զանազան արհեստներով: Այս ուղղութեամբ մի քանի վանքեր սկսել են գործել, ցանկալի է, որ մօտիկ ապագայումն էլ այս գեղեցիկ գործը բոլոր վանքերում իրագործուի և վանքերն ծառայեն իրենց նշմարիտ նպատակին աւելի ընդարձակ շափերով:

Յովհանն Հուսի հինգ հարիւր ամեակը: Յունիսի 23-ին լրացել է Յովհանն Հուսի մահուան հինգ հարիւր ամեակը: յուզիդ հինգ հարիւր տարի առաջ 1415 թ. տանջալից մահով խարոյկի մէջ հոգին աւանդեց այն հազուագիւտ մարդը, որ կուսեց Աստուածային նշմարութեան, իւր ազգի իրաւունքների պաշտպանութեան համար: Նա մեռաւ 46 տարեկան հասակում (ծն. 1369 թ.) իւր գործունէութեան և հոգևոր ոյժերի լիակատար ծաղկման միջոցին: Տանջուեց և շարշարանքով մեռաւ նա եկեղեցու աւետարանական մաքրութեան գաղափարի համար և իւր սլաւոն շեշ ժողովրդի իրաւունքների համար, այն ժամանակ, երբ հռոմէական-կաթոլիկ եկեղեցին հասել էր իւր բարոյական քայքայման և պահանջում էր արմատական փոփոխութիւնների, իսկ ազգային քաղաքական կեանքի շրջանում և մասնաւորապէս շեշ ժողովրդի նկատմամբ առաջ եկած հալածանքը և գերմանականութեան ուժեղացումն առաջ բերին զրգուումն շեշ ժողովրդի մէջ պաշտպանելու իրենց ազգային իրաւունքներն և գիմադրելու գերմանական թնութեան: Այն ժամանակները պապական աթոռի վրայ նստում էր ոչ թէ մէկ, այլ երկու և մինչև անգամ երեք պապ միաժամանակ, երբ հռոմէական-կաթոլիկ հոգևորականութիւնը — բարձր և ստորին, իւր գործունէութեամբ և բարքով իւր հօտի վրայ թողել էր տարբարութող ազդեցութիւն: Այդ շարիքների դէմ կուսելու համար եղան ժողովներ (Պիղայում, Կոնստանցում և Բազիլում), որ յայտնի էին բարենորոգչական անունով: Եկեղեցու քայքայման դէմ բողոքներ լսում էին ամբողջ կաթոլիկ Եւրոպայում: Հուսի նախորդներն անդադար իրենց քարոզներով և հրատարակութիւններով կոչում էին ժողովրդին և առհասարակ եկեղեցական գասին հետեւնալ ժամանակակից ապականուած կեանքից: Կուսում էին նաև գերմանական թնութեան դէմ, որը կաշկանդել էր կաթոլիկ աշխարհը: Սակայն այդ բոլորի դէմ ամենաուժեղ կոխն սկսեց մղել Յովհանն Հուսը:

Հուսն և նորա կողմնակիցները ստեղծեցին մի ուժեղ ընդգիմադիր ոյժ բոլոր այն ապականուած մթնոլորդի դէմ, որ պատել էր կաթոլիկ եկեղեցու շուրջը, միաժամանակ կոխ մղելով նաև

իրենց չեղ ժողովրդի իրաւունքների և Աստուածային հիմարտութեան համար: Հուսը մարմնացնում էր իւր մէջ իւր ժողովրդի պատմական ոգին: Այդ ամենը նա ձեռք էր բերել ոչ թէ առանձին մեծ ուսումով (թէև նորան վերադրում են կարեւոր աստուածաբանական շարադրութիւններ), այլ միայն Քրիստոսի աւետարանի բարձր սկզբունքների հոգով կրթուելով: Նա շատ խոր կերպով հաւատում էր այդ սկզբունքներին և ընդունում նորա ազատարար ոգին իւրաքանչիւր քրիստոնեայի համար: Հուսի այդ բարոյական բնաւորութիւնը երևան եկաւ նորա ամբողջ կեանքի ընթացքում, և մանաւանդ 1414—15 թ., երբ նա տանջալից կերպով մահացաւ Կոնստանդուս Զնայած, որ իւր բարեկամները նախազգուշացրել էին՝ բայց այնուամենայնիւ նա ընդունեց Սիկիզմունդ թագաւորի առաջարկութիւնը՝ գնալ Կոնստանց, որտեղ 1414 թ. նոյեմբերի 1-ին նշանակուած էր «տիեզերական ժողով», որտեղ նա յոյս ունէր իւր հաւատամքը հրապարակով և հանդիսաւոր կերպով պաշտպանել: «Նա կամենում եմ, որ ինձ լսեն և քննութեան ենթարկեն հրապարակով, քարոզել և պատասխանել ինձ դրուած հարցերին այնպէս, ինչպէս հրամայել է մեր Տէրը Յիսուս Քրիստոս, և պատրաստ եմ յանձն առնել մահը նորա հիմարտ կտակների համար»: Այսպէս է գրել Հուսը Սիկիզմունդ թագաւորին (1 սեպտ. 1414 թ.) նախ քան Կոնստանդ հանապարհութիւլը: Իսկ երբ նա գնաց Կոնստանց (3 նոյեմբ. 1414 թ.), շնայած որ ապահովութիւն էր դրուած թագաւորի կողմից նորա անձի նկատմամբ, բայց նորան բռնեցին և բանտարկեցին Գօալիբէն բերդում, որտեղ նա կրեց ամեն տեսակ նեղութիւններ, ուժերին կրելով շղթաներ: Սակայն իւր այդ բոլոր տանջանքների մէջ էլ կարողացաւ զեղեցիկ կերպով պաշտպանել իւր բարձր սկզբունքները ու վարդապետութիւնը: Ոչ մի սպառնալիք կամ խոստում չեա չկասեցրին նորան իւր վարդապետութիւնից:

«Սիրում եմ հիմարտութիւնը, ասում եմ ասութիւնը, ամուր կերպով տածում եմ յոյս առ Աստուած, իմ դաւանած սկզբունքներից և ոչ մէկը հակառակ չէ ոչ Քրիստոսի օրէնքին և ոչ էլ ս. Հայրերի դրուածներին: Մանկական խոնարհութեամբ յանձնում եմ ինձ Ամենակարող և Ամենաբարի Ուսուցչիս, Որը փորձում է սրտերը և Իւր անսահման ողորմածութեամբ կը մաքրի ինձ զազանի մեղքերից»: Այսպէս էր պատասխանում Հուսը իւր թշնամիներին, իսկ բարեկամներին ներշնչում էր իւր ամուր և հաստատուն հաւատքը յանուն յաղթանակի հիմարտութեան և Քրիստոսի ընդդէմ հակաքրիստոնէութեան: Մինչև անգամ այն բողէին, երբ յուլիսի 6-ին դատապարտութեան օրը, Հուսին բերին եկեղեցի, որպէսզի եկեղեցու հայրերի ներկայութեամբ կատարեն նորա վրայ

այն ձևը, որ նա իբր պէտք է իւր վարդապետութիւնից յետ մնալու խոստումը տայ, նա բարձրաձայն կերպով աղաղակեց. «... Ինձ համոզում են հեռանալ իմ վարդապետութիւնից, ոչ, եւ չեմ կարող անարգել Քրիստոսի հաւատքը և դաւանանել իմ խղճին: Եթէ ուրանամ ճշմարտութիւնը, ինչպիսի աչքերով կարող եմ հայել զէպի երկինք: Ի՞նչպէս կը համարձակուեմ հայել ժողովրդի աչքերին, եթէ իմ յանցանքով նորա դարաւոր համոզմունքները խորտակուեն: Երբէք, ժողովրդի այդքան հոգիների ազատութիւնը ինձ համար աւելի թանկ է, քան իմ հոգանիւթ մարմինը»: Այս եղաւ նորա վերջին խօսքերը, որից յետոյ դահիճները աչքեցին նորա հոգանիւթ մարմինը՝ կոնստանցի խաւովիլում, և յետոյ նորա աճիւնի մնացորդները թափեցին Հոռոսա գետը, սակայն Հոռոսի անմահ ոգին ապրում էր հետեոյապէս կերպով նորա յետնորդ սերնդի մէջ, ապրում է ներկայումս այնպէս, չնայած դժբախտաբար գետ չէ աղատուած գերմանական ոյժի ծանրութիւնից: Թող Հոռոսի կեանքը օրինակ ծառայի շատերի համար՝ լինել անձնուէր Աստուածային ճշմարտութեանը և իւր ազգի իրաւունքները պաշտպանելու սուրբ գործում:

Համալսարանների դռները բացուեցին Ռուսաց սեմինարիստների առաջ: Վերջապէս Ռուսաց սեմինարիստների առաջ բացուեցին բարձրագոյն դպրոցների դռները: Ժողովրդական լուսաւորութեան նախարարի յուլիսի 9-ի շրջաբերականի համաձայն թոյլատրւում է սեմինարիստներին առանց փորձնական քննութեան ընդունել թէ համալսարաններում և թէ այլ բարձրագոյն դպրոցներում, որտեղ ընդունելութեան պայմանները համապատասխան են համալսարանների ընդունելութեան: Այդ այն իրաւունքն է, որին սեմինարիստները ձգտել են կէս դարուց աւելի:

Դպրոցական սահմանափակումն, ինչպէս յայտնի է, սկսուել է Ռուսաստանում դեռ եւս Մեծն Պետրոսի ժամանակից: Հոգևոր դպրոցը բացուել է պատրաստելու եկեղեցու համար հոգևորականներ, այդ տեսակէտից և այլ դպրոցների կազմակերպութիւնը ստացել է ուրոյն ձև որոշ սահմանափակումով ոչ միայն ուսումնական դասընթացով, այլ և որոշ յատուկ տեղեկացումով: XVIII և XIX դարի առաջին կիսում Ռուսաստանում դպրոցների մէջ համարեա թէ առանձին աարբերութիւններ չկային: Սեմինարիստը միշտ հեշտութեամբ կարող էր աշխարհային այս կամ այն ասպարիզում պաշտօն ստանալ, և կամ սեմինարիստը կարող էր հեշտութեամբ լինել ուսանող համալսարանի և կամ այլ բարձրագոյն դպրոցի, որքան որ այն ժամանակ գոյութիւն ունէին: Հո-

զետր գպրոցները աւելի շուտ սկիզբն առնելով քան աշխարհային գպրոցները՝ երկար ժամանակ նոքա աւելի բարձր էին կանգնած, քան աշխարհայինը: XVIII-րդ դարում միջնակարգ գպրոցներ կոչուածները իրենց մրցակից բարձր գպրոց չունէին. XIX դարի առաջին կիսում սեմինարիստները ոչ մի բանով պակաս չէին այն ժամանակուայ գիմնազիստներից, հետևապէս այն ժամանակ առանձին արգելք չէր հանդիսանում սեմինարիստին մանկ բարձրագոյն գպրոց:

Սակայն յետագայում մարմնաւոր իշխանութեան կարգադրութեամբ հետզհետէ սահմանափակումներ եղան սեմինարիստների նկատմամբ: Հօգետր գպրոցներում սովորածներին առանձին թոյլատրութեամբ էր տրւում պաշտօն աշխարհային գործերում: Պա՛վել I կայսեր ժամանակ հրաման տրուեց, որ սեմինարիստներին ոչ մի տեղ չընդունեն՝ բացառութեամբ միայն բժշկական կուրսերում՝ այն էլ իւր առանձին թոյլատրութեամբ: Ուսումը համարւում էր պարտադիր հոգևորականների դասակների համար, և միայն կարծես հոգևորականների դասակների համար էր մնում գործելու բոլոր հոգևոր պաշտօնների մէջ: Բնականաբար այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ պետութիւնը ունենալով իւր շահերը եկեղեցական գործերում, այդ քաղաքականութիւնն էլ ունէր բռնած: Պետրոս Մեծի ժամանակից կառավարութիւնն ոչ մի տարրերութիւն չէր դնում աշխարհական կամ եկեղեցական պաշտօնների մէջ: Ամբողջ պետական կազմը դասակարգային էր: Գիւղացիութիւնը կապուած էր հողի հետ և կալուածատէրների, արհեստաւորները՝ համքարութեան, իսկ ազնուականները՝ գինուորական և պետական ծառայութեան հետ: Բնականաբար և հոգևոր դասակարգն էլ կապուած էր հոգևոր պաշտօնէութեան հետ: Պետութիւնը չէր թոյլ տալիս հարկատուներին դուրս գալ իրենց դասակարգից, ազնուականներն էլ իրենց համար ցածր բան էին համարում հոգևոր պաշտօն ստանձնել, ուրեմն մնում էր, որ հոգևորական դասակարգն էլ վարէր հոգևոր պաշտօնները:

Ալէքսանդր Ա-ի բարենորոգութիւնները վերջ տուին դասակարգային սահմանափակումներին, որոնց թւում և հոգևոր դասակարգի: Հոգևորականի դասակը իրաւունք ստացաւ սովորելու որտեղ էլ կամենում է և կամ իրաւունք շտովորելու՝ ազատ իւր կամքին: Սակայն ինչ վերաբերում է սեմինարիստներին, նրանց ազատութիւնը մնաց նախկին սահմանափակումներով:

Բարձրագոյն կրթութիւն ստանալու իրաւունքից դուրկ լինելով կամայ թէ ակամայ պէտք է մանէին հոգևոր գպրոց: Բայց այդ սահմանափակումն ժամանակի ընթացքում տրտունջների առիթ եղաւ և վերջապէս կուսաւորութեան Նախարարը համաձայ-

Նութեան գալով ա. Մինոդի հետ՝ բաց արաւ համալսարանների և այլ համապատասխան բարձրագոյն դպրոցների դռները սեմինարիատների առաջ՝ որ նոքա առանց փորձնական քննութեան կարող են շարունակել իրենց ուսումը:

### Ա Ն Պ Լ Ի Կ Ա Ն. Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Գերմանական նոր բարբարոսութիւնները, ինչպէս օրինակ խեղճող գաղերով թշնամու դէմ կռուելը, և Լուգիտանիա խոշոր շոգենաւի խորտակումն գերմանացիների ձեռքով, առաջ են բերել Անգլիայում աւելի վճռական օրոշումն — կռուել և շարունակել պատերազմը՝ մինչև որ թշնամին կխորտակուի: Անգլիական կառավարութիւնը հակառակ բոլոր տրադիցիաների կամենում է օգտագործել հասարակական բոլոր ոյժերը յօգուտ պատերազմի և մինչև անդամ առաջ է քաշել ունիատիստներին և բանւորներին: Անգլիական պետական եկեղեցին էլ կամենալով օգտակար լինել այս լուրջ ճգնաժամին՝ հանդէս է եկել իւր բոլոր ոյժերով և ամեն տեղ քարոզում է՝ որ այս պատերազմը պէտք է շարունակել՝ մինչև թշնամին վերջնականապէս առաջալուի: Մենաբրերի Արքեպիսկոպոսը բոլոր անգլիկան եկեղեցիների կողմից յայտարարել է առաջին նախարար Ասկվիտին, որ իրենք ջերմ կերպով կամենում են հանդէս բերել յանուն իրենց երկրի ընդհանուր գործի իրենց ամբողջ գիտութիւնը, ազգեցութիւնը և նիւթական միջոցները: Այս յայտարարութեան ձայնակից են եղել բոլոր եպիսկոպոսները: Բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը հրաւէր է կարգացել ամբողջ ազգին, որ հանդէս բերեն իրենց հոգևոր և նիւթական ոյժերը յաջող կերպով վարելու պատերազմը մինչև վերջը: Այնուհետև եպիսկոպոսները հրաւիրում են հոգևորականութեան և անդադար աղօթել և ապաշխարել, խնդրելով նաև Մենաբրերի և Նիւ-Իօրկի արքեպիսկոպոսներին՝ որ հրատարակեն հովուական թուղթ — կարգալու բոլոր եկեղեցիներում: Այդ խնդիրը յարգուած է և հետևեալ թուղթն են հրատարակել նոքա:

«Եղբայրներ ու քոյրեր յանուն Յիսուսի Քրիստոսի: Մեր կեանքի այս ժամին Տէրը մեզ վրայ պարտք է դնում կատարելու մեծ յանձնարարութիւն: Տիեզերական պատմութեան մէջ երբէք չեն պատահել այնպիսի դէպքեր, ինչպէս ներկայումս: Եւ մեր երկնաւոր Հայրը յանձնարարում է մեզ հանդիպել այս հանդիսաւոր ժամին հաւատքով, ոչ երերուն վճռականութեամբ և աղօթող յուսով... Պատերազմից 10 ամիս յետոյ մենք աւելի պարզ

քան սկզբում տեսնում ենք մեր ազգի ոգին փորձող Աստուծոյ դատաստանի մեծութիւնը և խստութիւնը: Քարտէզի վրայ դրուած է ոչ միայն մեր խօսքի պատիւը, այլ և մեր վտանգաւոր դրութիւնը և ազատութիւնը և մեր տեղը ազգերի մէջ երկրի վրայ: Այն ոգին, որ սպառազինուած է մեր դէմ, սպառնում է քրիստոնէութեան մէջ քաղաքակրթական կարգերի հիմունքներին: Նա ուժեղ է և անողորմ: Նա հեռացրուած կըլինի միայն այն ժամանակ, եթէ մենք մեր կողմից կենտրոնացնենք նորա դէմ բոլոր ոյժերը մարմնի, խելքի և հոգու, որն ունի մեր ազգը, մեր կայսրութիւնը: Ուստի և մենք հաւատաքով սպասում ենք կառավարութիւնից, որ տրիաջան կերպով կարողանայ կազմակերպել և օգտագործել, ամեն տեսակ ոյժերը մեր մարմնի, խելքի, հարստութեան և արդիւնաբերութեան: Մենք հանդիսաւոր կերպով հրաւիրում ենք բոլոր անդամներին եկեղեցու և հրաւիրում ենք մեր բոլոր քաղաքացիներին ուրախութեամբ և պատրաստակամութեամբ բաւարարել բոլոր պահանջներին, որոնք հանդէս կըգան կառավարութեան կողմից: Արդար գործի համար ձեռնարկած մեծ պատերազմը պահանջում է այդ ողւոր ինքնակամ զոհեր: Ծշմարտութեան և կամ մեր երկրի գործի համար ոչ ոք ոչ մի բան չէ կարող համարել շատ թանկ, որ հնարաւոր չլինէր զոհ բերելու: Տէրը սովորեցնում է մեզ այդ բանին: Պէտք է նեխարկուենք նորա կամքին: Ինչ որ մենք տալիս ենք, ինչ որ մենք կամենում ենք անել միայն հնարաւոր է նորա կամքի շնորհիւ:

Բայց մենք դեռ աւելին պէտք է առնենք, և այդ ամենակարեւորն է: Քրիստոնէական եկեղեցու պարտականութիւնն է կենդանացնել և առաջ տանել այն բոլոր հոգեւոր ոյժերը, որոնցից կախուած է ազգային ողու կարողութիւնը, ամբողջութիւնը և շնորհալի յատկութիւնները: Արդեօք ներկայումս այդ ոյժերը կենդանի և հաստատուն են, ինչպէս որ պէտք է լինեն: Մենք հիմք ունենք երկիւղ կրելու, որ նոքա որոշ շախմատ թուրացել են՝ համեմատաբար պատերազմի առաջին շարաթիւերին: Մենք վերստին գօտեպնդում ենք նիւթական կտուի համար և պատրաստելու այն ամենը՝ ինչ որ հարկաւոր է ապահովելու լիակատար և վերջնական յաջողութեան, բայց մեզ պակասում է վճարակաւնութիւնը և հաստատակամ որոշումն գործադրելու մեր հոգեւոր ոյժերը: Առաջին տեղը պէտք է տանք ազօթքին: Պատերազմը սկսելուց մենք երկու անգամ խնդրել ենք որոշելու մի հանդիսաւոր ազօթքի օր, և մինչև անգամ մենք տուել ենք այդ ազօթքի ձեւը: Ներկայումս ձեռք ամենամեծ և կարեւոր պարտականութիւնն է ազօթել և անդադար ազօթել: Այդ պարտքի պիտակցութիւնը բաժին է ընկնում բոլոր քրիստոնեայ ժողովուրդներին....»

Կոչը վերջանում է ամենաուժեղ խօսքերով համոզելով՝ որ պէտք է շարունակ աղօթել, քանի որ աղօթքի ոյժը վեր է ամեն բանից: Աղօթքի ոյժով ամեն բան կը արուի և կարելի կը լինի ժողովրդի ոգին բարձր պահել ցանկացած յաջողութիւնները ձեռք բերելու համար:

Ինչով կարող է եկեղեցին ծառայել ազգին ներկայ լուրջ ժամանակում: Այս հարցով ներկայումս զբաղւում է եկեղեցական մամուլը Անգլիայում, որտեղ պետական եկեղեցին վճռել է կենդանի մասնակցութիւն ունենալ ներկայ պատերազմում, ժողովրդական ոյժերը և եռանդը գործադրել յաղթել թշնամուն: Այս առթիւ հետաքրքրական յօդուածներ է լոյս տեսնում «Guardian» շաբաթաթերթում: Թերթի կարծիքով ներկայումս եկեղեցու պարտքն է գործադրել բոլոր միջոցները զարթեցնելու հասարակական կարծիքը: Իւր սպասաւորների միջոցով, եկեղեցու բեմից, այլ և այլ եկեղեցական կազմակերպութիւնների միջոցով նա պէտք է ժողովրդի մէջ առաջ բերի պարզ գիտակցութիւն իւր ունենալիք զերի մասին ներկայ հսկայական պատերազմում, որի մէջ պէտք է փնտռել նաև կրօնի ամենամուխրական շահերը: Եկեղեցու բեմից պէտք է անդադար կոչել ժողովրդին զէպի գործ: Եկեղեցու սպասաւորները հնարաւորութիւն ունին ուղղակի գիմել ժողովրդի լայն խաւերին: Միայն այդ ուղղութեամբ եկեղեցին կարող է համարուել աղգի ու ժողովրդի զեկամարը: Եկեղեցին պէտք է լինի աղգի խղճի պահարանը: Այդ տեսակէտից նա պէտք է իւրաքանչիւրին պարզաբանի նորա քառոյսական պարտքը հասարակութեան առաջ: Քրիստոնեայի պարտքն է, որ այս դժուարին ժամանակում ծառայի իւր հասարակութեան՝ միաժամանակ և ամբողջ աշխարհին, որի համար և ներկայումս պէտք է աշխատի ազատել ճշմարիտ աղատութիւնը և ճշմարիտ քաղաքակրթութիւնը: Եկեղեցին իւր այդ ուսմունքով, իւր քաղաքակրթական զերով պէտք է ասեղծի այն միջնորդը, որի մէջ միայն հնարաւոր կը լինի գործի իսկական կազմակերպութիւնը:

Բ. Վ. Ա.

